ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 7

Միհրան Գալստյան
Մնա՞լ, թե՞ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ 8

Լուսինե Տանաջյան
Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր 24

Սոնա Ներսիսյան
Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում 37

Սյուզաննա Բարսեղյան
Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում 49

II. ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ 65

Գայանե Հակոբյան
«Հալեպի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել 66

Գարիկ Աթանեսյան
Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում 78

Արմինե Տիգրանյան
Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով) 89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ 113

Ռոբերտ Օհանջանյան
Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում 114

Լուսինե Անգեղուշ
Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում 124

Մակիչ Վարդանյան
Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը 139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ 157

Սվետլանա Պողոսյան
Հազուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ 158

Հասմիկ Աբրահամյան
Ռոման Հովսեփյան
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապտույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի) 174

V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 189

Ռոբերտ Կարապետյան
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը 190

Նարե Գալստյան
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում 204

Նելլի Խաչատրյան
Սալվինե Մարկոսյան
Մարիամ Հարությունյան
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա) 218

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ 237

Հռիփսիմե Ասատրյան
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ 238

VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 247

Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերը 248

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 263

V

ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-190

Ռուբեն Կարապետյան, *պ.գ.դ.*
ՀԱԻ

ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Սփյուռքում էթնիկ խմբի պահպանումը և վերարտադրումը՝ որպես առանձին սոցիալական խումբ, մեծ մասամբ ապահովվում է ինքնակազմակերպման միջոցով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ լինելով միջմշակութային տարբերությունների սոցիալական կազմակերպության ձև՝[1] էթնիկությունն ունի օժանդակ սոցիալական մեխանիզմների կարիք: Վերջիններիս առաջացումը և գործառնումը կախված է ոչ միայն արտաքին պայմաններից, այլև մեծապես պայմանավորված է էթնիկ խմբի անդամների ծագմամբ, սոցիալ-ժողովրդագրական կազմով, արտագաղթի երկրի առանձնահատկություններով և բնակավայրով, գաղթի ժամանակահատվածով: Նշված գործոնները համայնքային կառույցների ձևավորման հիմքն են: Այս առումով հատկանշական է հայկական սփյուռքի փորձի ուսումնասիրումը, որն իր բնույթով բավական բազմազան և ինքնատիպ է:

Հոդվածում ներկայացված է ազգային, կրոնական, սոցիալ-տնտեսական և մշակութային տարբեր միջավայրերում հայերի՝ համայնքային գործունեության տրամաբանությունը՝ համաձայն Բեյրութի, Թեհրանի, Պրահայի և Լոս-Անջելեսի հայերի սոցիոլոգիական ուսումնասիրության նյութերի: Ըստ սոցիալ-ժողովրդագրական կտրվածքի՝ առանձնացվել են տեղացիներ և եկվորներ, ապա խմբավորվել են՝ ըստ տեղափոխման ժամանակի և ելքի վայրի: Վերլուծվել է, թե ինչպիսին է այդ խմբերի մասնակցությունը համայնքային գործունեության մեջ:

Այս ուսումնասիրությունը թույլ է տալիս սփյուռքահայերի ինքնակազմակերպման օրինակով կատարել իրավիճակի գործոնային վերլուծություն, հասկանալ էթնոսոցիալական հանրույթների հեռանկարները տարբեր միջավայրերում:

Հիմնաբառեր՝ ինքնակազմակերպում, Սփյուռք, էթնիկ խումբ, հայկական համայնքներ, այլազգի միջավայր, սոցիալական տարածք, սոցիալական կազմ:

Ներածություն

Ժամանակակից հայկական Սփյուռքի կայունությունը պայմանավորված է այն ներուժով, որը թույլ է տալիս նրան ինտեգրվել միջավայրում՝ մնալով որպես առանձին սոցիալական խումբ՝ իր գործելակերպով, մշակույթով և ինքնագիտակցությամբ: Այս համատեքստում հատուկ նշանակություն ունի այն տարածքի սահմանը ու դրա փոփոխությունը կամ վերացումը, որտեղ էթնիկությունը մնում է խմբի կարևոր հատկանիշ: Այդ տարածքի սահմանները ձևավորվում են այնպիսի սոցիալական ցուցանիշներով, որոնք արտահայտում են խմբի ներսում սոցիալական կապերի խտությունը[2], ենթակառուցվածքը և հա-

1 Барт 2006, 10.

2 Барт 2006, 200; Shain et al. 2003.

մախմբման ներուժը: Վերջինս ձևավորվում է այն պայմաններում, երբ, ինչպես նշում է Գ. Շեֆֆերը, նվիրվածությունը կոլեկտիվի նկատմամբ աճում է[3], որի արդյունքում առաջացող համայնքային կառույցները դառնում են սփյուռքյան խմբի համախմբվածության պահպանման մեխանիզմ: *Համախմբվածություն* եզրույթն այս համատեքստում բացատրվում է խմբի անդամների ուղղահայաց և հորիզոնական փոխազդեցությունների իրավիճակով, որը բնութագրում է խմբում վստահության, միմյանց նկատմամբ փոխօգնության վարքագծային դրսևորումները[4]: Այդ տարածքի *ինստիտուցիոնալ* համայնքային կառույցները կախված են սոցիալական կապերի որակից և խտությունից, որտեղ խմբի կազմը դառնում է կարևոր գործոններից մեկը:

Հոդվածում դիտարկվում են չորս քաղաքների՝ Բեյրութի, Թեհրանի, Պրահայի և Լոս-Անջելեսի հայերի շրջանում անկացված սոցիոլոգիական ուսումնասիրության նյութերը՝ ցույց տալով այդ խմբերի կազմի և դրանց անդամների համայնքային ներգրավվածության փոխկապակցվածությունը: Այդ կապերի ուսումնասիրումը էթնիկ կազմով միատարր, իսկ ծագմամբ ու միջավայրով՝ բազմազան հայկական համայնքների օրինակով կարող է դառնալ կարևոր հիմք՝ սփյուռքների ինքնակազմակերպման օրինաչափ և առանձնահատուկ մեխանիզմների բացահայտման, նրանց զարգացման ուղիների ու պայմանավորող գործոնների դուրսբերման համար[5]:

Ուսումնասիրության մեթոդները

Վերլուծական մշակումները, որոնք ներկայացված են հոդվածում, հիմնված են Բեյրութի, Թեհրանի, Պրահայի և Լոս-Անջելեսի հայերի շրջանում մոտ յոթ տասնյակ գործիչների խորացված հարցազրույցների և 1260 ձևայնացված հարցազրույցների նյութերի վրա[6]: Ուսումնասիրության հիմքում դրվել են ընտրանքի սկզբունքներ, որոնք թույլ են տվել տարածել վերլուծական հաշվարկները՝ տվյալ համայնքների ամբողջության վրա: Հետազոտությունների ընթացակարգը բավական բարդ և բազմաշերտ է եղել, քանի որ հետազոտական օբյեկտի մասին քանակական տեղեկատվությունը[7] բացակայում էր:

3 Шеффер 2003, 167.

4 Joseph Chan, Ho-pong To, Elaine Chan Reconsidering social cohesion: Definition and analytical framework https://www.socialcohesion.info/concepts/concept/joseph-chan-ho-pong-to-elaine-chan.

5 Սա կարևոր է հասկանալու համար, թե ինչպես են սփյուռքի անդամները աջակցում իրենց և ուրիշներին Chukwu-Emeka Chikezie, Strategies for building diaspora/migrant organisation capacity for development p. 3, https://www.gfmd.org/sites/g/files/tmzbdl1801/files/documents/gfmd_brussels07_csd_session_5_en.pdf.

6 Հետազոտման մեթոդի մասին, տե՛ս Կարապետյան և այլք 2023, 8-17; Կարապետյան 2019, 53-63; 2014:

7 Սոցիոլոգիական բառարանում «կվանտիֆիկացիա» եզրույթը սահմանվում է որպես «որակական բնութագրերի քանակական բնութագրում հաջորդ փուլի՝ չափման համար, այսինքն՝ արդյունքին թվային արժեք տալը»: Բնութագրվում է ըստ՝ https://rus-sociologia.slovaronline.com/1440-Квантификация.

Վերջինս բազմաթիվ խոչընդոտներ է ստեղծել անհրաժեշտ տվյալների բազայի ձևավորման համար: Այդ իսկ պատճառով՝ հետազոտվող թիրախի որակական բնութագրերին քանակական հատկանիշներ հաղորդելու համար յուրաքանչյուր քաղաքում նախօրոք իրականացվել են խորքային հարցազրույցներ տվյալ համայնքի գործընթացներին իրազեկ փորձագետների հետ:

Հարցազրույցի ընթացքում հստակեցվել են տվյալ քաղաքի հայերի կազմը, սեռը, տարիքը, միգրացիոն հետագիծը և սոցիալ-մասնագիտական կառուցվածքը: Տեղեկատվության նման աղբյուրին դիմելը թելադրված էր վիճակագրական տեղեկատվության լրիվ կամ մասնակի բացակայությամբ[8]: Ստացված տվյալները համակարգելուց հետո յուրաքանչյուր քաղաքին հատկացվել են հետևյալ քվոտաները՝ սեռային, տարիքային (18-29, 30-49, 50 և ավելի), տեղաբնակ և միգրանտ (տեղափոխվել են այս քաղաք մինչև 2000թ., 2001-2010 թթ. և 2011 թ. հետո): Նշված քվոտաների շրջանակներում հարցազրույցի մասնակիցները ընտրվել են «ձնագնդի» սկզբունքով[9]: Օգտագործելով այս ընտրանքը՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի աշխատակիցները յուրաքանչյուր նշված քաղաքում ձևայնացված հարցազրույցներ են իրականացրել 300-320 հարցվողների շրջանում[10]:

Մեթոդական սկզբունքներում նախատեսվում էր նշված քաղաքների հայերի սոցիալ-տնտեսական և մշակութային հատկանիշների և համայնքային ինքնակազմակերպման մեջ հայերի մասնակցության ցուցանիշների միջև տրամաբանական կապերի որոնում: Հաշվի են առնվել էթնիկ խմբի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ծագման վայրը, նոր միջավայրում հարմարվելու ժամանակահատվածը, սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, որոնք ներկայացվում են համայնքային կազմակերպությունների գործունեությանը մասնակցության (կուսակցական, կրոնական, մշակութային, սպորտային, բարեգործական ևն) հետ կապի մեջ[11]: Դրա հիման վրա մշակվել են խմբի կազմը

8 Այսպիսով՝ ԱՄՆ վիճակագրությունը գրանցում է միայն միգրացիոն բնութագրերը (ժամանման տարեթիվը և մեկնման վայրը):

9 Հարցազրույցների ընթացքում մերժումների թիվը տարբեր քաղաքներում տարբեր է եղել: Մերժումների ամենամեծ թիվը գրանցվել է միգրանտներով խիտ բնակեցված քաղաքներում. յուրաքանչյուր տասներորդը:

10 Հետազոտողները ընտրում են այդ մարդկանց՝ ելնելով որոշակի հատկանիշներից կամ որակներից: Նրանք որոշում և ստեղծում են քվոտաներ՝ ապահովելու համար, որը կարող են ընդհանրացվել ամբողջ բնակչության համար: Վերջնական ենթաբազմությունը հիմնվելու է բնակչության մասին հետազոտողի գիտելիքների համաձայն, տես https://hr-portal.ru/story/kvotnaya-vyborka-opredelenie-tipy-primery-etapy-i-mnogoe-drugoe. Այս հետազոտության մեջ յուրաքանչյուր քվոտան ներառում էր 10-15 հարցվողներ, յուրաքանչյուր քվոտայում մտցվեցին ուղղիչ ինդեքսներ՝ յուրաքանչյուր ընտրված խմբի ընդհանուր համամասնություններին համապատասխանեցնելու համար:

11 Օգտակար և խոստումնալից է այս հարաբերությունները վերլուծել տրոհված հարթության մեջ՝ «կուսակցական կազմակերպության» տեսանկյունից, որտեղ այս երկփեղկության երկրորդ անդամը կարող է լինել եկեղեցին, մշակութային կամ մարզական կենտրոնը, երիտասարդական կազմակերպությունը ևն:

վերլուծելու սկզբունքներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու խմբի կայունությունն ու համախմբվածությունը: Վերջիններս կախված են բնակության *էթնոհոծության* աստիճանից, խմբի քանակից, համայնքային կազմակերպությունների գործունեությունից և միջուկային կորիզի առկայությունից:

Նույն սկզբունքի հիման վրա հետազոտական օբյեկտների ընտրության ելակետը հայկական համայնքների տիպաբանությունն էր՝ ըստ հետևյալ *բինար* բնութագրերի. ա) հոծ-ցրիվ, բ) ավանդական/հին-նոր համայնքներ, գ) դավանանքային առումով՝ մոտ-հեռու միջավայր, դ) շրջակա միջավայրի սոցիալ-տնտեսական զարգացվածության պայմանները՝ բարձր -ցածր ե) խմբի սոցիալական կազմը՝ բարդ-պարզ, զ) ըստ ծագման և ժամանակագրության՝ միատարր-տարասեռ: Ելնելով վերոգրյալից՝ առանձնացվել են երեք տիպի համայնքներ. առաջինն անցյալ դարասկզբին ձևավորված, երկրորդը՝ խառը տիպի՝ բաղկացած տեղաբնակներից և ժամանակակից *միգրանտ*ներից, իսկ երրորդը՝ բաղկացած միայն վերջին տասնամյակների *միգրանտ*ներից և նրանց սերունդներից[12]:

Որպես առաջին տիպ՝ առանձնացվել են Բեյրութի և Թեհրանի[13] հայկական համայնքները,[14] երկրորդը տիպի մեջ դիտարկվել են Լոս-Անջելեսի հայերը, որպես երրորդ տիպ ընտրվել են Պրահայի հայերը: Նման տիպաբանությունը համեմատելի է ոչ պակաս կարևոր այլ բնութագրերի հետ, ինչպիսիք են՝ բնակավայրի տեսակը՝ էթնիկ հոծ կամ ցրիվ տեղաբաշխման ձևերը, ելքի վայրերի քաղաքական, կրոնական և էթնոմշակութային առանձնահատկությունները նն: Վերոնշյալ բոլոր տիպաբանական սկզբունքները արտացոլվել են ընտրված քաղաքների հայերի ցուցանիշներում: Վերլուծության հաջորդ բաղադրիչը հայերի մասնակցությունն է համայնքային կառույցների գործունեությանը: Ուսումնասիրության մեջ դա արձանագրվել է այնպիսի ցուցիչներով, ինչպիսիք են՝ կառույցում «կազմակերպիչ», «անդամ» և համայնքային կառույցում ներգրավվածություն չունեցող անձ: Մասնակցության ձևի նման քննարկումը մի կողմից ցույց է տալիս խմբի անդամների ակտիվության մակարդակը, մյուս

12 Սրա մասին առավել մանրամասնորեն տես Լևոնյան 2021:

13 Իհարկե, Թեհրանի հայկական գաղթօջախն ավելի վաղ պատմություն ունի, բայց այս պարագայում որոշվեց այն միավորել այս խմբի մեջ:

14 *Հայկական գաղթօջախ* հասկացությունը հայկական սփյուռքում շրջանառության մեջ է դրել ականավոր հետազոտող Ալպոյաջյանը (տես Ալպոյաջյան 1961): «Գաղթօջախ» տերմինը ավելի մոտ է բնութագրում որոշակի երկրում, որոշակի քաղաքում ապրող սփյուռքահայերի վիճակը: Ըստ երևույթին, այս եզրույթը արտացոլում է մի երկրում գտնվելու փաստը, որը խմբի հայրենիքը (կամ ծագման վայրը) չէ: Բացի այդ, եզրույթը ընդհանրացնում է տվյալ բնակավայրի հայերի ամբողջ կազմը, մինչդեռ «համայնք» եզրույթը բնորոշում է համայնքի միայն այն հատվածը, որը կազմակերպված է կոնկրետ կառույցի մեջ: «Գաղթօջախ» տերմինը նաև գաղափարական ուղերձ է պարունակում: Նա նշում է որոշակի սոցիալական տարածության զարգացման, այնտեղ էթնոսի կենսապայմանների ստեղծման փաստը մի կողմից, մյուս կողմից կա թաքնված իմաստ, այն է՝ դրա ժամանակավոր որոշակի նրբերանգ՝ չորոշելով տևողություն, վիճակ: Վերջինս շատ կարևոր է ոչ միայն հետազոտողի համար իր թիրախային պարադիգմը կառուցելիս, այլև ուղերձ՝ այս խմբի անդամների (և ողջ էթնիկ խմբի համար) հնարավոր միավորման մասին:

կողմից՝ նույն խմբի անդամների հավակնությունների մակարդակը համայնքային հարցերի կազմակերպման տեսանկյունից:

Համայնքային կազմակերպություններում ներգրավվածների կազմը

Հայտնի է, որ Բեյրութի հայերը իրենց ծագումնաբանությամբ միատարր են՝[15] կազմված 1915-20 թթ. Կիլիկիայից և նախկին Օսմանյան կայսրության հարավային շրջաններից եկած փախստականների առաջին սերնդից: Եվ պատահական չէ, որ հետազոտության ընթացքում [տե՛ս աղ. 1] հանդիպում ենք հիմնականում նրանց հաջորդ սերունդներին, որոնք ընտրանքում կազմել են ավելի քան 86 տոկոս: Միատարրություն է նկատվում նաև Թեհրանում, մի տարբերությամբ, որ այս քաղաքի հայերի գաղթական միջուկն էլ ավելի միատարր է և կազմված է Իրանի հայկական տարբեր բնակավայրերից տեղափոխվածներից[16]: Ինչ վերաբերում է Պրահային[17] և Լոս-Անջելեսին[18], ապա իրավիճակը բոլորովին այլ է: Պրահայում հայերի ճնշող մեծամասնությունը առաջին սերնդի միգրանտներ են (հիմնականում ներգաղթյալներ ՀՀ-ից և ԱՊՀ-ից) և նրանց հաջորդ սերունդների միայն տասներորդն է ծնվել Չեխիայում:

Լոս-Անջելեսում նորեկների խումբը ավելի բազմազան է: Ընտրանքում այս քաղաքում ծնվածներն այստեղ բնակվող հայերի ընդհանուր թվի 1/5-ից պակաս են, իսկ եկվորների մեջ ամենամեծ տոկոսը Մերձավոր Արևելքից (36%), ՀՀ-ից և ԱՊՀ երկրներից (33%) եկածներն են: Ավելին, փորձագետները նշում են, որ բացի նշված վայրերից, Լոս-Անջելես են եկել գաղթել նաև Եվրոպական և Լատինաամերիկյան երկրների (Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ)[19] հայեր:

Ըստ միգրացիայի ժամանակագրության՝ առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Պրահայի և Լոս-Անջելեսի հայերը: Եթե Բեյրութի հայ համայնքը կազմավորվել է 20-րդ դարի սկզբին, ապա Պրահայում և Լոս-Անջելեսում համայնքի կազմավորման գործընթացը դեռևս շարունակվում է: Ակնհայտ է, որ Պրահայի հայկական համայնքները, որոնք ձևավորվել են 1990-2000-ական թթ.[20] գաղթածներից (ինչպես և հայերը Արևելյան Եվրոպայի շատ այլ քաղաքներում), ներկայացնում են հայերի նոր էթնոսոցիալական կազմավորումներ և այս կերպ կտրուկ տարբերվում են Բեյրութի և Թեհրանի «ավանդական» սփյուռքյան համայնքներից [աղ. 1]:

15 Հայտնութեան 2019:

16 Hovannisian 2021, 38-45.

17 Mezhlumyan 2023.

18 Հարցազրույց N 1-8, ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժին, Լոս Անջելես, 2013:

19 Կարապետյան 2018:

20 Հարցազրույց N 1-16, ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժին, Պրահա, 2022:

Աղյուսակ 1.
Հետազոտված քաղաքներում հայ բնակիչների ծննդավայրը (հարցվող, հարցվողի հայր) տոկոսներով:

ծննդավայրը	**Բեյրութ**		**Թեհրան**		**Պրահա**		**Լոս-Անջելես**	
	հարց-վող	**հարց-վողի հայր**	**հարց-վող**	**հարց-վողի հայր**	**հարց-վող**	**հարց-վողի հայր**	**հարց-վող**	**հարց-վողի հայր**
տվյալ քաղաք	86	55	83	89	11	3	23	3
Արևմտյան Հայաստան	4	22	-	4	-	-	-	8
ՀՀ	-	-	-	5	72	89	33	27
Եվրոպա և ԱՊՀ	-	-	-	2	17	11	7	10
Մերձավոր Արևելք	10	23	17	-	-	-	36	52
ԸՆԴԱՄԵՆԸ	100	100	100	100	100	100	100	100

Վերոնշյալ ցուցանիշները հայ Սփյուռքի համայնքների պատմության և դրանց ժամանակակից կազմի ձևավորման անբաժանելի տարրերն են: Ըստ ընտրված չորս քաղաքների հայերի ուսումնասիրությունների՝ պարզ է դառնում, որ միգրանտների միատարրությունն ու գաղթի համաժամանակյա լինելը (10-20 տարվա ընթացքում) առավելապես նպաստում են ընդհանուր էթնիկ սոցիալական ենթակառուցվածքի և ինքնակազմակերպման ինստիտուտների ձևավորմանը [աղ. 2]:

Աղյուսակ 2.
Հետազոտված քաղաքներում տեղափոխված հայերի բնակության ժամանակաշրջանը

տեղափոխման ժամանակահատվածը	**Բեյրութ**	**Թեհրան**	**Պրահա**	**Լոս Անջելես**
մինչև 1980 թ.	35	33	-	16
1981-1990 թթ.	-	-	-	31
1991- 2000 թթ.	-	39	38	27
2000-2009թթ.	-	28	38	21
2010 թ. հետո	65	-	24	5
ԸՆԴԱՄԵՆԸ	100	100	100	100

Այսպիսով, նորեկներն ավելի քիչ են ներգրավված համայնքային կառույցներում: Չեխիայի[21] ուսումնասիրված քաղաքում, հայերը հիմնականում չունեն ձևավորված ավանդական համայնքային կառույցներ, ինչպիսիք կան Թեհրանում, Բեյրութում և Կիպրոսում: Այս խմբերի ինքնակազմակերպումն ինքնաբուխ է, և հավանական է, որ յուրաքանչյուր խմբի համար համայնքային կառույցների զարգացման գործընթացն անցնի ձևավորման, զարգացման և մարման որոշակի

21 Տես Հարցազրույց N 1-16, ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժին, Պրահա, 2022:

փուլեր: Այդ քաղաքների հայերը նշված գործընթացի սկզբնական փուլում են: Որոշակի վստահությամբ հնարավոր է կանխատեսել իրադարձությունների զարգացման հետագա փուլերը, բայց քանի որ ինքնակազմակերպման գործընթացը որոշվում է բազմաթիվ գործոններով (քաղաքական, տնտեսական, սոցիալական իրավիճակ և խմբի կազմի փոփոխություններ), դժվար է հասկանալ, թե այդ գործոններից որն է որոշելու իրադարձությունների հետագա ընթացքը: Սփյուռքում նոր խմբերի ինքնակազմակերպման սկզբնական փուլը պատկերավոր ասած, երկփեղկված կետի է նման, որի հետևանքների մասին կարելի է ենթադրել, սակայն թե որքանով են դրանք իրատեսական, դժվար է ասել: Այստեղ պահանջվում է համայնքային կազմակերպությունների մասնակիցների որակական ցուցանիշների վերլուծություններ. դրանք կարող են հիմնված լինել ձևայնացված հարցազրույցի նյութերի վրա և ստուգվել փորձագիտական գնահատականներով ու կարծիքներով [աղ. 3]:

Աղյուսակ 3.
Թեհրանում, Լոս-Անջելեսում և Պրահայում ծնված և ներգաղթած հայերի մասնակցությունը համայնքային կառույցներում, տոկոսներով:

Քաղաք		կազմակերպիչ	համայնքային կառույցի անդամ	կառույցից դուրս է	ԸՆԴԱՄԵՆԸ
Թեհրան	ծնվել է այս քաղաքում	24	75	1	84
	ապրում է այստեղ 20 տ. ավելի	36	64	-	100
	ապրում է այստեղ 10-20 տ.	34	50	16	100
	ապրում է այստեղ 10 տ. պակաս	-	-	-	
	Ընդամենը եկվորները	39	55	6	16
Լոս Անջելես	ծնվել է այս քաղաքում	27	66	7	26
	ապրում է այստեղ 20 տ.ավելի	29	66	5	100
	ապրում է այստեղ 10-20 տ.	38	62	-	100
	ապրում է այստեղ 10 տ. պակաս	-	-	-	
	Ընդամենը եկվորները	30	66	4	74
Պրահա	ծնվել է այս քաղաքում	20	60	20	6
	ապրում է այստեղ 20 տ. ավել	11	29	60	100
	ապրում է այստեղ 10-20 տ.	14	50	36	100
	ապրում է այստեղ 10 տ. պակաս	-	53	47	100
	Ընդամենը եկվորները	9	37	54	94

**Համապատասխան հարցի բացակայության պատճառով Բեյրութը ներկայացված չէ աղյուսակում:*

Նշված քաղաքներում իրականացված ձևայնացված հարցազրույցների ընթացքում արձանագրվել է հայերի սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների փոխկապվածությունը համայնքային գործունեությանը, որտեղ առանձնակի ուշադրության է արժանի կազմակերպիչների խումբը:

Ուսումնասիրված քաղաքների հայերի ցուցանիշների ժողովրդագրական բաղադրիչներից առավել նշանակալի են համայնքային կազմակերպություններում ներգրավված մասնակիցների միգրացիոն հետագիծը և սեռատարիքային կազմը: Աղյուսակ 3-ում ներկայացված են համայնքային կազմակերպություններում ներառվածների մեջ տվյալ քաղաքներում ծնվածների և այն եկվորների տվյալները, ովքեր եկել են ավելի քան 20 տարի առաջ, 10-ից 20 տարվա միջակայքում և վերջին տասնամյակի ընթացքում: Ընդհանուր պատկերն ակնհայտ է. այս քաղաքների հին բնակիչները դառնում են համայնքային կազմակերպությունների առանցքը: Բեյրութում և Թեհրանում ծնված հայերը (հարցվածների ավելի քան 80%-ը) համայնքային գործունեության կազմակերպիչներն են: Լոս-Անջելեսում և Պրահայում այս միջուկն այնքան էլ միատարր չէ: Ակնհայտ է նաև, որ նոր միգրանտները դժվարությամբ են ինտեգրվում համայնքային կառույցներին. սա հատկապես վերաբերում է Պրահայի հայ բնակիչներին, որոնց կեսից ավելին իրենց համայնքային հարցերում ներգրավված չեն համարում:

Նմանապես, Լոս-Անջելեսում հայաստանցի հայերի խումբը ակտիվ չէ համայնքային կառույցների կազմավորման մեջ, իսկ այլ խմբերը, օրինակ՝ պարսկահայերը, լիբանանահայերը ևն, առանձին-առանձին ակտիվ են և ունեն կայուն համայնքային կազմակերպություններ [աղ.4]:

Աղյուսակ 4.
Համայնքային կառույցներում հայերի մասնակցության բնույթն ըստ երեք սերնդի (տոկոսներով)

քաղաք	տարիքը	կառույցում կազմակերպիչ			կառույցի անդամ			կառույցից դուրս			ԸՆԴԱՄԵՆԸ		
		տ	կ	Ը	տ	կ	Ը	տ	կ	ը	տ	կ	ը
Թեհրան	18-29	-	44	33	100	56	67	-	-	-	100	100	100
	30-49	60	11	15	40	89	85	-	-	-	100	100	100
	50 և ավելի	29	31	30	71	65	67	-	4	3	100	100	100
	Ընդամենը	33	21	23	67	78	76		1	1	100	100	100
Բեյրութ	18-29	25	14	17	75	86	83	-	-		100	100	100
	30-49	13	11	4	87	86	29	-	3	1	100	100	100
	50 և ավելի	36	40	10	64	53	15	-	7	1	100	100	100
	ընդամենը	23	21	21	77	75	77		4	2	100	100	100
Լոս-Անջելես	18-29	25	7	13	62	86	78	13	7	9	100	100	100
	30-49	36	27	31	64	69	67	-	4	2	100	100	100
	50 և ավելի	41	44	42	59	47	51	-	9	7	100	100	100
	ընդամենը	36	30	32	61	63	62	3	7	6	100	100	100
Պրահա	18-29	-	10	7	40	60	60	40	30	33	100	100	100
	30-49	-	5	15	44	41	42	57	54	43	100	100	100
	50 և ավելի	29	7	18	36	28	32	35	65	50	100	100	100
	ընդամենը	15	7	10	42	42	42	43	51	48	100	100	100

Ընդհանուր առմամբ ուսումնասիրված քաղաքները տարբերվում են միմյանցից համայնքային հարցերում հայերի ակտիվությամբ: Համայնքային գործունեության մեջ ամենաակտիվը Լոս-Անջելեսի, Թեհրանի և Բեյրութի հայերն են. հարցվածների ավելի քան մեկ երրորդն իրեն համարում է համայնքային միջոցառումների կազմակերպիչ, մինչդեռ Պրահայում այդ անձանց մասնաբաժինը հարցվածների ընդհանուր թվի ընդամենը մեկ տասներորդն է:

Հետազոտության նյութերը ցույց են տալիս, որ համայնքային կազմակերպությունները ձևավորվում են հայկական սփյուռքում ընդունված պրակտիկաների հիման վրա: Այսպիսով, Առաջավոր Ասիայի «ավանդական» հայկական համայնքներից եկածները հավասարապես արագ կազմակերպվում են նոր վայրում՝ լինի դա Ֆրանսիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա ևն: Նոր համայնքային կառույցները ունեն նույն գործելակերպը, ինչ նախկին բնակության վայրի կառույցները, մինչդեռ նախկին ԽՍՀՄ-ից և Հայաստանից եկածների համար այս գործընթացը երկար է տևում և ունի քառասային բնույթ:

Այսպիսով, համաձայն դիտարկումների՝ Պրահայի հայերը (գոնե այն հատվածը, որը գաղթել է ավելի մեծ տարիքում) իրենց չեն համարում սփյուռք, այլ բնութագրում են իրենց դեռևս որպես Հայաստանի նախկին բնակիչներ: Նրանք կտրված չեն հայրենիքից, որի հետ կապված են բազմաթիվ հարաբերություններով՝ ընտանեկան, հայրենակցական, տնտեսական ևն: Ըստ երևույթին, նրանք ունեն սեզոնային միգրանտների հոգեբանություն, ովքեր զգում են իրենց կապը հայրենիքի հետ, որտեղ ունեն ընտանիք և ընկերներ, ունեցվածք, և դեռ չեն պատկերացնում իրենց՝ որպես նոր համայնքի մաս: Հավանական է, որ այս իրավիճակը բնորոշ է Արևելյան Եվրոպայի շատ քաղաքների հայ ներգաղթյալներին [աղ. 5]:

Աղյուսակ 5.
Թեհրանում, Բեյրութում, Լոս-Անջելեսում և Պրահայում համայնքային կառույցներում կազմակերպիչների սեռերի հարաբերակցությունը սերնդային և տարիքային կտրվածքով (տոկոսներով):

Քաղաք	տարիք	տղամարդկանց և կանանց հարաբերակցությունը			երեք սերնդի հարաբերակցությունը		
		տ	կ	ը	տ	կ	ը
Թեհրան	18-29	-	100	100	-	24	18
	30-49	38	62	100	60	29	36
	50 և ավելի	20	80	100	40	47	46
	ընդամենը	23	77	100	100	100	100
Բեյրութ	18-29	33	67	100	-	24	18
	30-49	50	50	100	60	29	36
	50 և ավելի	40	60	100	40	47	46
	ընդամենը	41	59	100	100	100	100

Լոս-Անջելես	18-29	67	33	100	15	5	9
	30-49	33	67	100	31	32	34
	50 և ավելի	41	44	100	54	63	57
	ընդամենը	38	62	100	100	100	100
Պրահա	18-29	13	87	100	8	25	12
	30-49	9	91	100	6	25	13
	50 և ավելի	67	33	100	86	50	75
	ԸՆԴԱՄԵՆԸ	50	50	100	100	100	100

Համայնքային ինքնակառավարման իրավիճակը կարելի է հասկանալ նաև էթնիկ խմբի կազմի հետևյալ ժողովրդագրական ցուցանիշներով: Այսպես, հիմնվելով համայնքում իրենց ակտիվ համարող անդամների սեռի և տարիքի ցուցանիշների վրա՝ կարելի է դատել, թե տղամարդկանց և կանանց որ տարիքային *կատեգորիաներն* են ընդունում համայնքի շահերի պաշտպանման կարևորությունը և, հետևաբար, ինչ սոցիալ-հոգեբանական դրդապատճառներ են նրանց առաջնորդում: Անդրադառնալով տղամարդկանց և կանանց երեք սերունդների ներկայացուցիչների մասնակցությանը համայնքային հարցերին՝ մի կողմից արձանագրում ենք ներկա իրավիճակը, մյուս կողմից պատկերացում ենք կազմում զարգացման հնարավոր հեռանկարի վերաբերյալ: Ի վերջո, եթե կանայք և երիտասարդները ակտիվ են համայնքային պրակտիկաներում, ապա համայնքային կառույցների պահպանման և զարգացման հեռանկարներն ավելի մեծ են, և հակառակը:

Նշված քաղաքների ուսումնասիրությունների նյութերը բավականին հստակ ցույց են տալիս բերված փաստարկների վավերականությունը: Արժե սկսել նրանից, որ Պրահայում նկատվում է տղամարդկանց ակնհայտ գերակշռում, իսկ Լոս-Անջելեսում, Թեհրանում և Բեյրութում կանայք կազմակերպչական գործունեության մեջ տղամարդկանց հավասար ակտիվություն են ցուցաբերում:

Ըստ այդմ, Պրահայի հայերի շրջանում համայնքային գործընթացներից կտրվածության աստիճանն ավելի բարձր է (հարցվածների կեսը), իսկ կանանց մոտ այս ցուցանիշը երկու անգամ ավելի բարձր է տղամարդկանցից, իսկ մյուս երեք քաղաքներում այն շատ ցածր է: Ըստ Աղյուսակ 5-ի ձախ սյունակում ներկայացված տվյալների՝ Թեհրանում, Լոս-Անջելեսում և Բեյրութում կանանց կեսը համայնքային գործերում ակտիվություն է ցուցաբերում տղամարդկանց գրեթե հավասար հարաբերակցությամբ: Ուսումնասիրված քաղաքներում, բացառությամբ Լոս Անջելեսի, տղամարդկանց տարիքային կազմը ներկայացված է 30 տարեկանից բարձր, իսկ կանայք՝ նաև 30-ից ցածր: Ընդհանուր առմամբ, միջին և ավագ սերունդները ակտիվ են համայնքային գործունեության մեջ՝ կազմելով այս *կատեգորիայի* ճնշող մեծամասնությունը: Միևնույն ժամանակ, Թեհրանում և Բեյրութում ակտիվ են նաև երիտասարդները: Այս քաղաքների 18-29 տարեկան գրեթե յուրաքանչյուր հինգերորդ հարցված, իրեն դիտարկում է կազմակերպիչների խմբում [աղ. 6]:

Աղյուսակ 6.
Թեհրանում, Բեյրութում, Լոս-Անջելեսում և Պրահայում համայնքային կառույցներում կազմակերպիչների չափաբաժինը հայերի առանձին խմբերում, ըստ զբաղմունքի և աշխատանքային գործունեության տեսակի (տոկոսներով):

	Թեհրան		**Բեյրութ**		**Լոս Անջելես**		**Պրահա**	
	1*	**2****	**1**	**2**	**1**	**2**	**1**	**2**
զբաղված ֆիզ. աշխատող	13	23	8	7	15	42	-	-
ծառայողներ	8	22	31	25	-	60	13	12
մասնագետներ	12	17	23	15	85	39	25	13
գործարար	-	-	38	31	-	56	12	8
սովորող	21	56	-	-	-	92	13	33
տն.տնտեսուհի	29	29	-	-	-	61	25	100
թոշակառու	17	33	-	-	-	-	12	100
ընդամենը	100	27	100	19	100	47	100	18

** 1-հայերի սոցիալական կառուցվածքը՝ ըստ զբաղմունքի և աշխատանքային գործունեության տեսակի;*

*** 2- կազմակերպիչների մասնաբաժինը հայերի առանձին խմբերում՝ ըստ զբաղմունքի և աշխատանքային գործունեության տեսակի*

Լոս-Անջելեսում նույնպես կազմակերպիչների ճնշող մեծամասնությունը (80%) մասնագետներ են, մինչդեռ բուն խմբում նրանք կազմում են ընդամենը 40%: Այս քաղաքում կազմակերպիչներն ընդգրկված են նաև համայնքի անդամների չաշխատող հատվածում՝ ուսանողներ, տնային տնտեսուհիներ: Կազմակերպիչների տեսակարար կշիռը բարձր է աշխատողների և ձեռնարկատերերի շրջանում՝ հարցվածների երկու-երրորդը: Այսպիսով, կազմակերպիչների ամբողջ կազմը բաշխված է մասնագետների և ֆիզիկական աշխատողների միջև, իսկ որոշակի սոցիալական խմբերում նրանք կազմում են հարցվածների երեք չորրորդից ավելին: Զբաղմունքի տեսակը և աշխատանքի բնույթը առավել հավասարաչափ ներկայացված է Թեհրանի և Պրահայի հայերի շրջանում, բայց այստեղ հետաքրքրականը հայության ոչ աշխատանքային մասի ակտիվության փաստն է: Ըստ այդ ցուցանիշի՝ Բեյրութը մի կողմից մոտ է Թեհրանին, մյուս կողմից՝ որոշակիորեն նման է Պրահային:

Եզրահանգումներ

Այսպիսով, միանգամայն բնական է, որ Սփյուռքի հայերը համայնքային կառույցների ձևավորման միջոցով ինտեգրվում են ընդունող միջավայրին՝ որպես առանձին էթնոսոցիալական խումբ: Ակնհայտ է, որ այս գործընթացի բնույթն ունի իր առանձնահատկությունները, որոնք որոշվում են միջավայրով և այդ խմբերի կազմով: Եթե առաջին դեպքում գործ ունենք էթնոսոցիալական մի-

ջավայրի, տնտեսական, իրավական, սոցիալական և այլ համատեքստերի հետ, ապա երկրորդ դեպքում՝ սփյուռքահայերի յուրաքանչյուր խմբի սոցիալ-ժողովրդագրական կազմի ձևավորման պատմության հետ: Այս խմբից են առաջանում անհատներ, ովքեր ունակ են մասնակցելու համայնքային համերաշխության, համայնքային կյանքի «ավանդական» մոդելի կազմավորմանը. մոտ իրավիճակներում նրանք հենվում են հայերի բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերի՝ կազմակերպչական կառույցներում նրանց ակտիվ ներգրավվածության վրա:

Վերջիններս այս դեպքում շատ զարգացած են և բազմաթիվ, և կոչված են ոչ միայն էթնիկ համերաշխության, այլև սոցիալական և մշակութային բազմաթիվ անհրաժեշտ կարիքների բավարարմանը: Տվյալ դեպքում գործ ունենք էթնիկ խմբի ինքնակազմակերպման, նրա ռեսուրսային հնարավորությունների այնպիսի աճի հետ, որը թույլ է տալիս ոչ միայն իր շահերը պաշտպանել, այլև վերստեղծել էթնոսոցիալական համայնք բոլոր՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային հատկանիշներով:

Այս մոդելից մի փոքր հեռու են գտնվում էթնիկ միջուկ ունեցող համայնքները՝ բաղկացած հնաբնակներից, որոնք ծագումով ավանդական համայնքներից են: Նման իրավիճակում համայնքային կառույցներում բացահայտվում են լուրջ տարբերություններ՝ համայնքի հնաբնակների և նոր անդամների միջև: Իսկ նոր համայնքների ինքնակազմակերպման գործում կարևոր դեր են խաղում սոցիալապես առաջադեմ շերտերը՝ մասնագետները, շատ դեպքերում լրագրողները, իրավաբանները, արվեստագետները, այսինքն՝ նրանք, ովքեր կենտրոնացած են հասարակական հարաբերությունների վրա և ձգտում են ստեղծել այնպիսի միջավայր, որն արձագանքում է նրանց հմտություններին և դառնում նրանց գործունեության սնուցման աղբյուր: Բայց այստեղ առանձին կազմակերպությունների գործունեության համար դաշտը բավական աղճատված է, իսկ սոցիալական տարածքը՝ խիստ սահմանափակ, և իրադարձությունների հետագա զարգացումը կապված է ներքին ու արտաքին ազդակների հետ: Առաջին դեպքում դա որոշվում է տվյալ խմբի հակասական սոցիալական զարգացմամբ, նրա տնտեսական ձեռքբերումներով, երկրորդ դեպքում, ի լրումն էթնոսոցիալական միջավայրի, տվյալ երկրում և էթնիկ հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԼՊՈՅԱՋՅԱՆ 1961
Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, Հայերու ցրումը աշխարհի զանազան մասեր, Գ հ., Նոր դարերու սկիզբէն մինչև Ի դարու սկիզբ, Ա մաս, Արևելեան գաղութներ, Գահիրէ:

ՀԱՅՏՕՍԹԵԱՆ 2019
Հայտոսթեան Փ. Լիբանանը՝ Իւրայատուկ իր Տարածաշրջանին մեջ // Լիբանահայերն այսօր, ՀԱԻ հրատ., Երևան-Բեյրութ, էջ 25-29:

ԼԵՎՈՆՅԱՆ 2021
Լևոնյան Ռ., Հայերի համարկումը և/կամ ձուլումը Ֆրանսիայում (1920–2000ականներ) // Հայ էթնիկությունը սփյուռքում, Երևան, ՀԱԻ հրատ., 182-191:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 2014
Կարապետյան Ռ.Ս., Հայերը սեփական և այլազգի միջավայրում // Հայ էթնիկության ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները: Համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություն, Երևան, «Գիտություն», 15–22:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 2018
Կարապետյան Ռ.Ս., Հայ համայնքները այսօր. Թեհրանի, Լոս-Անջելեսի, Բեյրութի, Փարիզի, Թբիլիսիի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 171-174:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 2019
Կարապետյան Ռ.Ս., «Սեփական և այլազգի միջավայրում բնակվող հայերի համեմատական ուսումնասիրության հիմնական ուղղությունները՝ հետազոտությունների խնդիրները և հեռանկարները» // Լիբանանահայերն այսօր. Էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, Երևան, ՀԱԻ հրատ., 53 –63:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 2023
Կարապետյան Ռ.Ս., Ժամանակակից հայկական սփյուռքի ուսումնասիրություններ. Նոր գիտական ուղղության ձևավորումը և զարգացումը // Հայ էթնիկությունը սփյուռքում Երևան, ՀԱԻ հրատ., 34-61:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ և այլք 2023
Կարապետյան Ռ.Ս., Ներսիսյան Ս.Ա., Տանաջյան Լ.Ա., Բարսեղյան Ս.Ս., Ֆրանսիայի հայկական համայնքներն այսօր. Հայացք ներսից, Երևան, ՀԱԻ հրատ.:

БАРТ 2006
Барт Ф., Этнические группы и социальные границы. Социальная организация культурных различий. Сборник статей (ред. Ф. Барта), Москва, Новое издательство, 200.

ШЕФФЕР 2003
Шеффер Г., Диаспоры в мировой политике // Диаспоры, № 1, 164-187.

HOVANNISIAN 2021
Hovannisian RG., Armenian communities of Persia/Iran: history, trade, culture Mazda Publishers.

MEZHLUMYAN 2023
Mezhlumyan M., The Armenians in the Czech Republic // Review of Armenian Studies, N 2 (32), 93-109.

SHAIN et al. 2003
Shain Y., Barth A., Diasporas and International Relations Theory // International Organization, 2003, Vol. 57. № 3, 449-479.

Ruben S. Karapetyan, *Dr.Habil*
Institute of Archaeology and Ethnography, NAS RA

THE PROBLEM OF INVOLVING ARMENIANS IN THE COMMUNITY STRUCTURES OF THE DIASPORA

Keywords: Self-organization, diaspora, ethnic group, Armenian communities, foreign environment, social space, composition.

The preservation and the reproduction of an ethnic group in the diaspora, in addition to external conditions, is largely determined by the composition, origin, country and the place of residence, the period of formation and the socio-demographic characteristics of the ethnic group. The logic of the links between the participation of the Armenians in the community activities in the various national, religious, socio-economic and cultural environments is revealed on the basis of the materials of the sociological surveys among the Armenians of Beirut, Tehran, Prague and Los Angeles.

The inclusion of the indicators presented in the final result of the study, using the example of the nature and level of self-organization of the Armenians of Diaspora, allows us to conduct a factor analysis of the situation in this ethnosocial community, to understand its prospects as a special component of the studied countries.

Рубен Суренович Карапетян
Институт археологии и этнографии НАН РА

ПРОБЛЕМА ВОВЛЕЧЕНИЯ АРМЯН В ОБЩИННЫЕ СТРУКТУРЫ ДИАСПОРЫ

Ключевые слова: Самоорганизация, диаспора, этническая группа, армянские общины, иностранное окружение, социальное пространство, состав.

Сохранение и воспроизводство этнической группы в диаспоре, помимо внешних условий, во многом обусловлено составом, происхождением, страной, местом проживания, периодом формирования и социально-демографическими характеристиками этнической группы.

Логика связей между участием армян в общинной деятельности в различных национальных, религиозных, социально-экономических и культурных средах раскрывается на основе материалов социологического исследования армян Бейрута, Тегерана, Праги и Лос-Анджелеса.

Включение показателей, представленных в результате исследования, на примере характера и уровня самоорганизации армян диаспоры позволяет провести факторный анализ ситуации в данном этносоциальном сообществе, понять его перспективы как особой составляющей исследуемых стран.

Ներկայացվել է՝ 16.02.2024
գրախոսվել է՝ 10.06.2024
ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Աբելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan
To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan
The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan
Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan
Main issues of armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan
"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan
Authencity discurse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan
Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan
Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush
Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan
Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan
Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan
Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cyrcle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan
The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan
Perceptions of homeland in the armeniam community of Los Angeles 204

Nelli Khachaturyan
Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan
Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян
Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян
Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян
Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян
Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян
“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян
Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян
Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджанян
Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш
Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян
Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян
Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян
Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДИАСПОРЫ

Рубен Карапетян
Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян
Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян
Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсиме Асатрян
Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ 248

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 263

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփելյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ՀԱԻԱ 6